

ձեռքը, թէ իրաւարան եւանգելիանցին այդ բոլորը յայտնի է, միայն ստիպւած էինք կասկածելու, թէ Աքիմեանի դէպքում նոյն իրաւարան եւանգելիանցին ձեռնառու չէր հասկանալ ընդհանուր օրէնքի իմաստը և աւելի ձեռնառու էր իրան այնպէս ձեռնառնել, իբր թէ չէ հասկանում և չը գիտէ օրէնքը, կամ անտես է առնում անկեղծ ճշմարտութիւնը:

Այլապէս մենք պէտք է ընդունենք, որ իրաւարան եւանգելիանց իրաւարանութեան մէջ ոչինչ չէ հասկանում: Իսկ այդ անկեղծութիւնն է ընդունել:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՐԱՅ ՄԱՄՈՒԼ ԲԱՅՏԻ ՄԱՍԻՆ

Ինչպէս և պէտք էր սպասել, դէպի տաղանդաւոր գրող Բաքիբի մահը վրաց մամուլը և հասարակութիւնը ևս անտարբեր չը մնացին, վրացիք ևս մասնակից եղան հայ հասարակութեան կրած վշտին, իրանց մամուլի միջոցով արտայայտելով իրանց ցաւակցութիւնը հայերի կրած կորուստի պատճառով: Իրանց մամուլը կեանքի ընթացքում այդ երկու բնական կապերով միմեանց հետ կապւած ժողովուրդները՝ ունենալով միատեսակ ճակատագիր, ընթանալով մի և նոյն շաւղով, բնական է, որ այժմ ևս պէտք է մասնակից լինեն թէ միմեանց ուրախութեան և թէ տխրութեան: Եւ հէնց այդպէս էլ եղաւ Այսօր Բաքիբի մահուն առիթով նրանք մասնակից եղան հայերի վշտին, նրանք արձագանք տուեցին հայերին: Վրաց մամուլի կողմից «Վիկտորի» խմբագիրը մի պատկերից միջոց վերաբերող դադարի վրա, և շտապելով իր լրագրի մի քանի համարներում ամբողջ սիւներ նուիրել նշանաւոր հեղինակի յիշատակին, նկարագրելով նրա կեանքը, նրա նշանակութիւնը հայերի համար, մի առ մի առարկելով նրա գործածքները արժանաւորութեան վրա, և վերջում էլ որդաւով Բաքիբի մահը: «Վիկտոր» լրագրում տպւած Բաքիբի կենսագրութիւնը զարգացրած է բաւական ճիշդ և հետաքրքիր տեղեկութիւններով, ուր չէ մոռացվում ևս այն իրողութիւնը, որ Բաքիբի հանգէս եկաւ «Մշակի» մէջ և նրա գործունէութիւնը հիւսկած էր «Մշակի» գործունէութեան հետ «1872 թւից, «Մշակի» առաջին համարից սկսած, գրում է յիշելով լրագրի, Բաքիբի աշխատում էր այդ լրագրում մինչև 1885 թիւը: Այդ միջոցում թէհրանի նկարագրութեան մէջ Բաքիբի խօսում էր և վրաց իշխան Ալեքսանդրի մասին, տեղեկութիւններ տա-

լով նրա կեանքից, որը և իր ժամանակին թարգմանելով, տպւեց նաև վրաց «Գրութեա» լրագրում: Ուրիշ շատ տեղեկութիւններ հաղորդուց յետոյ, վրաց «Վիկտոր» լրագրի մանրամասնութեան հանդէսը, իսկ վերջում էլ հանգուցեալի յիշատակին նուիրում է հետեւեալ ողբը. «Բերկութիւն և հանգստութիւն քո հոգուն, պատուական զրոյք էրէկ ու այսօր կատարւած իրողութիւնները հաստատեցին, որ քեզ պէս մարդ մահով էլ չէ մեռնում, այլ ընդհակառակն, գու մահով յաղթեցիր անյաղթ մահին, դու ինքը սպանեցիր մահը, որովհետև քո ձեռքով ստեղծւածները հոգի և կեանք առան, և քո յիշատակը երկար կը մնայ ամեն մի բարի հայի սրտում, ինչպէս մի թանգազին մարգարիտ ծովի մէջ: Մարդս երկու անուն պէտք է ունենայ, առում է վրաց առածը. մէկը այստեղ թողնելու, իսկ միւսը հետը տանելու համար. դու այդ երկու անունը ունէիր,— և այն որ հետը տարար զարգացրած էր բազմաթիւ ծաղիկայ ձեռահիւս պսակներով, իսկ այն անունը, որ այստեղ թողնելով, զարգացրած է այնպիսի ծաղիկայ պսակներով, որոնք հիւսկած են սրտի խորքերի զգացմունքներից, և որոնք յաւիտեան ոչ թաւառում են, ոչ էլ փչանում: Անմահութիւնը ուրիշ ինչ բան է, եթէ ոչ այս:» Վրաց մամուլի այդ համակարգում զրգար աւելի քան ուրախելի է և միանգամայն ուշադրութեան արժանի: Տեղական ռուս մամուլը ևս յարգանքով վերաբերեց դէպի Բաքիբի մահը և անունը:

Ս. Ն.

ՆԱՄԱԿ ԲԱՅՏԻ

Ապրիլի 27-ին

Այս տարւոյ երկրորդ համերգը տեղի ունեցաւ ապրիլի 25-ին խմբի օգտին տուած, տեխնիկական կողմից այդ աշուղ կոնցերտին հասարակութեան շատ չնչին մասն էր ներկայացել: Այդ անտարբերութիւնը բնաւ սաղ չէ գալիս մեր հասարակութեան:

Սուտ չէ, որ մեր աւելի մօտ պարտաւորութիւնները թողած մեր երեսակայութեան մէջ երբեմն շատ և շատ հեռուներն ենք պտտուել կարա-Մուրգա իր ընկերակիցներով արժանի է աւելի քան յիշատակեալ քան թէ հասարակութիւնը ցոյց է տալիս:

Երրորդ տարին է ահա, որ այդ խումբը իր շօշափելի ծառայութիւններով նպաստում է Բազուի հայերի մէջ զեղարուեստական ճաշակի մշակմանը: Երբ տարի է, որ հայ ժողովուրդը մեծ և հանդիսաւոր տօներին լսում է երգեցու բեմից նրա

քառաձայն և կանոնաւոր երգասացութիւնը: Երկու հարկերի մօտ պատաններ եկել սովորել և անցել են կարա-Մուրգայ երաժշտական քուարից և որքան ուրեմն նպաստել են կանոնաւոր երգասացութեան տարածման, այդ դէպքում հասարակութեան անտարբերութիւնը միանգամայն դատապարտելի է: Կատարարները անտարբերութիւն առաւել ևս համարձակւում են նկատել Բազուի հասարակութեան, որ նա այս անգամ իր այդ տեսակ սառն վերաբերմամբ, արդարեւ դատապարտելի զիջք բռնեց: Յոյս ունենալով, որ ապագայում նա չի մոռանայ իր պարտաւորութիւնը, անցնենք համերգի նկարագրութեանը: Երրորդ տարւոյ և տասներեկերորդ համերգական երեկոն էր:

Երբ մասի բաժանած 12 բողոքովին նոր նոր երգերից էր բաղկացած պրոգրաման: Խումբը իրան պահում էր բողոքովին ազատ երգերի մէջ աւելի լաւ «Ջի հեռանալ» էր, որ հանած է կարինեանի «Հուշանիկ» ողբերգութիւնից: Երբ այդ այն պատճառով աւելի լաւ տպաւորութիւն թողեց հասարակութեան վրա, որ «Հեռացողը» Վարդանի դուստրն է՝ առաքինի Հուշանիկը: Նոյնպէս լաւ անցաւ «Ի բեր ձայնից», երաժշտ. Չուխանեանի: Ինձ թւում է որ յարգելի երաժիշտը շատ աշուղ կերպով է այդ բաղդը եղանակը յարմարացրել անմոռանալի Պերիկլիսիանի նոյն պիսի քաղցր խօսքերին, որ այնպէս քնքոյշ կերպով հնչում է ամենքիս ականջին— «Նշույր երբ մենք»: Հասարակութիւնը ամեն երգի վերջում բուռն կեցցենքով վարձատրում էր երգեցողներին. իսկ վերջում երկուսի ծափահարութեամբ պրոգրամայից դուրս, երգել տուեց թաշնանի «Բաքէն», որը ընդունւեց խիստ ոգևորել ցոյցերով:

Նկատելի է մի բան, որ շատ անգամ կրկնել ենք մենք, այն է, որ պ. կարա-Մուրգա անպատճառ պէտք է առանձին խնամքով զննէ և ժողովրդական երգեր, ժողովուրդը այդ շատ սիրում է, բայց այդ երեկոյեան համարեալ և ոչ մի ժողովրդական երգ չերգեց:

Ա. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի ռուսաց լրագիրներում կարդում ենք որ Թիֆլիսի նահանգական գանձատան (կազնա-չէյսովի) մէջ յայտնվեցաւ 313,000 ռուբլու գումարի գողութիւն: Մի և նոյն ժամանակ անհետացել է նահանգական գանձապահի օդնական իմանով, որին դրանք համար ամեն միջոցներ են գործ դրված:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ Եւրեանում մի քան

հայաներ են եղած այն հնչման, որ նոյնութեամբ ունենալ մեր նախնեաց հետ և վրաց լեզուի հնչմունքը կատարեալապէս համաձայնում է թէ Միսրոպեան և թէ մեր հնչման հետ, ծանօթ տառերի մասին իսկ թէ վրացիք իրենք ուղիղ են հնչում, այդ մասին պ. Աղայանից բերում է հետեւեալ փաստերը: 1) Վրացիք չունեն հին և մոտեակ լեզուն Նոյն ինչպէս խօսելիս են եղել հինգերորդ դարում, նոյն կերպով և խօսում են այսօր: 2) Վրացիք չունեն այլ և այլ բարբառներ, այլ բոլորը միակերպ են խօսում, որ շատ բնական է մի բուն և իւր տեղի անշարժ մնացած ժողովրդեան համար... սոցա այժմեան դրական բարբառն ևս մի է և հնոյն պէս հասկանալի: 3) Վրացիք մինչև մեր դարի սկիզբը (փոքր ընդհատութեամբ) պահել են իրենց քաղաքական անկախութիւնը, հետեւաբար և ազատ են եղել օտար ազդեցութիւնից, օտար հոսանքից և պահպանել հայկական տառերի հնչման համեմատ: Անհաւանական չէ, ուրեմն, որ ռուսացիք վրաց միջնաւորութեան շնորհիւ բաղդաւորապէս յաջողել են անվտար պահպանել այն հնչմունքն, որ գործածել և դրաւոր աւանդել են մեր նախնիք, մեր դպրութեան հիմնադիրներն, ճիշդ այնպէս, ինչպէս որ տաճկահայ ժողովուրդն էլ տաճկական լեզուի տիրապետութեան շնորհիւ աղաւաղ էլ է (թիւ) չը ներգանջ պ. Տէմիրճիպաշեան) այդ մի և նոյն հնչմունքը: Այս տիրույթեան ազդեցութիւնն ամենից աւելի երևում է պ. տ. և կ. տառերի կորուսեալ հնչման վրա: Այն ժամանակ, որ Արաբաբեան ժողովուրդը՝ վրաց լեզուի հարգաւոր հնչմունքով պաշտպանուած, հնչում էր բուն նախնական արտասանութեան մօտ՝ պ. տ.

նի տարի առաջ գոյութիւն ունէր կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղը, որը մի քանի պատճառներով խափանվել էր: Այժմ ապրիլի 17-ին, յիսուն անձինք, արագան առաջնորդի միջոցով մի խնդրագրով դիմեցին Բարեգործական ընկերութեան Թիֆլիսի կենտրոնական վարչութեանը, թույլտւութիւն ստանալու նորից բանալ ընկերութեան տեղական ճիւղը և իրաւունք ստանալ հին ճիւղի փողերը յետ պահանջելու այն անձինքներից, որոնց մօտ այդ փողերը պահւած էին:

ՍԳՆԱԽԻՑ մեզ գրում են «Վրդէն սկսել են մեզանում կանգնեցնել ս. կարապետ երգեցու զանգակատան խաչը, որը մի տարի առաջ ստատիկ քամուց վայր էր ընկել: Դրա վրա ծախսւում է 400 ռուբլի»:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ Եւրեանում են որ ապրիլի վերջին օրերում այնպիսի չոր օրեր էր անում Եւրեանում, որ սովորաբար միայն ամառ ժամանակ է լինում:

Մեզ գրում են հետեւեալը Եւրեանից, ապրիլի 25-ից: «Այսօր, ճաշից յետոյ, թուրք մի քանի խաների ծառաներից երկուսը հանդիպելով քէֆ անող հայերի մի խմբի, կուռ են սարքում այդ հայերի հետ և այդ կուռ ժամանակ թուրք ծառաներից մէկը հանում է ատրճանակը և չորս անգամ արձակում: Արձակած դնողներին մէկով անմտանդ վերք է հասցնում հայերից մինին: Թուրքերը բանտարկւած են»:

Մայիսի 3-ին Վանքի մայր-եկեղեցում կատարվեց հոգեհանդիստ Մօսկվայում վախճանված Յովհաննէս Յովնանեանի յիշատակի համար: Հոգեհանգստին ներկայ էր բազմաթիւ հասարակութիւն, Մարիամեան-Յովնանեան, Վաչեանեան և մի քանի ուրիշ օրերուց դպրոցների աշակերտները: Պատարագիչը Արիստակէս եպիսկոպոսն էր, որը և մի քանի խօսք անց հանգուցեալի մասին: Հոգեհանգստից յետոյ Մարիամեան-Յովնանեան դպրոցի վարժօճի՝ օրերուց Թալուքեան մի ծառ. կարգացի՝ պատիւ յիշեալ դպրոցի հիմնադրի:

Թէ մեր քաղաքի վարիչները ինչքան հոգ են տանում քաղաքի շահերի մասին, այդ երևում է այն իրողութիւնից, որ Թիֆլիսի այն բնակիչները, որոնք իրանց սեփական տներն ունեն, յափշտակուած են մինչև անորոշ ամբողջ փողոցներ և մի քանիսն ևս իրանց բնակարանները: Այս իրողութիւնը հաստատուում է նրա-

(Կը շարունակվի)

*) Թէ տիրող լեզուն ինչ խաղեր կարող է խաղալ, իթէ անուշադրութեամբ վարուին նրա հետ,—այդ ապացուցանում է, որ այսօր նոյն իսկ ռուսահայերի մէջ էլ երբեմն պատահում ենք տառադարձութեան սխալների, որոնց պատճառն, ի հարկէ, կայր հետադարձութիւնն և հմտութեան պակասութիւնն է: Օրինակի համար, մեր մէջ գրում են Տիեր, և ստէտիկական և այլն, հետեւելով ռուսերէնին, որ ստիպել էր դրվում է Тьеръ, эстетическій և այլն, փասն զի ուրիշ կերպ էլ կարող, բայց այդ սխալ է մեզ համար, փասն զի բնագիրը Tiers, estétique չէ, այլ Thiers, esthetique, և մենք th հնչման դիմաց ունենք Թ. և ոչ թէ Տ:

աւելին, Միսրոպեան և արեւելեան հայոց հնչմանց վրա: Բայց «չորհուրդ ևս դայն» ինչպէս ասում է ինքը, հարկաւոր է դիտել, որ համեմատութիւնը շատ թոյլ է: Յ. Միսրոպեան իբրեւ Օրէնանում ռուսում աւարտող (եթէ չենք սխալվում) դիմում է Փրանսերէնի օգնութեան, բայց այդ էլ չէ յաջողվում նրան: Աղաւա-Որէնը, ինչպէս յայտնի է, բուն Փրանսիական հոգ չէ, այլ գերմանական, ռուսի ոչինչ կայ այդտեղ զարմանալի, եթէ նորա բնակիչը մարդու Փրանսիական արտասանութիւն չուներ, այլ աւելի գերմանականին են միտում և ինչպէս յայտնի է յ հնչումը օտար է գերմաներէնին, գերմանացիք օտարաց յ-ն միշտ Շ են հնչում, j'ai, j'etè—Շէ, Շտէ, argent—արճան և այլն (Գերմաներէնը իր յ-երը հնչում է ց (կամ Յ), jemand—եէմանը, jäger—հէդէր և այլն. և այստեղ նա հետեւում է լատիներէնին): Իսկ մարտիկացիք յուսական դաղթականութեան ծնունդ լինելով, անհաւանական չէ, որ յունական հնչման յատկութիւնն ունենային զեռ, և հետեւաբար յ հնչելին որպէս օ, aujourd'hui—օգուրդիւի, փոխ. օժուրդիւի: Եւրի լեզուն էլ յ հնչումին համակիր չէ, ինչպէս և Շ-ին և նրանց փոխանակում է Ս և Զ-ով: Բայց եթէ փոքր ինչ աւելի խոր քննելու լինէինք Յ. Միսրոպեանի այս օրինակները՝ մենք կը խնդրէինք յօդուածագիրն, որ քննէ և մեզ տեղեկացնէ թէ արդեօք Աղաւա-Որէնցի Փրանսիական մտաւորական շ-ն չէ և այն Փրանսիական հնչելիները՝ որոնք օրինակի համար ռուսաց մեծ բանաստեղծի անունը՝ Пушкин—ընդօրինակում են Poujkin, սխալ չեն գործում և կամ հաւասարապէս կարելի է Փրանսերէնի մէջ հայերէն յԱՄ բառը jam-ի տեղ (s)cham դրել:

Այդպէս և մարտիկացիք: Քննութեանց հետեւանք յաջող չի լինի նրա համար կարծեմ, վասն զի որքան և սխալ հնչուի յ-ի յատկութիւնը երբեք չէ շփոթվում Շ-ի կամ Յ-ի հետ: Այս կէտն էլ ուշադրութեան արժանի է:

Իբրեւ Գ. առարկութիւն յառաջ է բերված Պ. Կ. Տ. և Շ տառերի հնչման խնդիրը: Բայց այս առարկութիւնն էլ հայերէն լեզուի Հօմի ուսուցչի գիտը չէ: Այս խնդիրը յուզել են տաճկահայերի բոլոր այն զրադէտներն, որոնք հեռաւոր կամ մերձաւոր կերպով խօսած կամ գրած են այս նիւթի մասին: Ուստի մեր տկար ոյժով փորձենք պարզել այս «կեանք» էլ: Նախ չարաչար սխալվում են հ. Տէրվիշեան, Միսրոպեան և այլք կարծելով թէ մենք այդ տառերն այնպէս ենք հնչում, ինչպէս իրանք: Մենք հնչում ենք այդ տառերը ոչ թէ Բ, Գ, Դ-ին մօտ—այլ ինչպէս ասել էր հ. Այալեան, լծորդ աւելի Փ, Գ, Թ-ին, և ահա այստեղ է, որ խոտորում է տաճկահայ ռաւմիլը մեղմից: Ինչպէս ճշդիւ ասում է պ. Գարազաւեան մեր Պ. դրված է յունաց (π) Բ-ի, կն յունաց (χ) Կ-ի և Տ, յունաց T (τ)-ի դիմաց: Բայց որ քանապէս կարող է ասել թէ յունական այդ տառերից, օրինակի համար P, (π) հնչվում էր փ, այնպէս թանձր ինչպէս հնչվում է այսօր տաճկահայոց և մեր մէջ: Մենք կարող ենք ասել ընդհակառակն թէ նա հնչվում էր ճիշդ այնպէս, ինչպէս այժմ մենք ենք արտասանում, այսինքն նուրբ, փ-ից փափուկ, վկայ է յոյն ռաւմիլ-ցարդ անարատ պահւած արտասանութիւնը: Սա-կայն աւելի հաստատ ապացոյց է մեր ասածին վրաց լեզուի հնչումն: Վրացիք իբրեւ ցեղակից հայոց, միանգամայն իբրեւ դրացի, որ միշտ յարաբերութեան մէջ էին մեզ հետ, լաւագոյն պա-

նույն օրը այս օրերս թիֆլիսի Միաձայնական կույսի ված թաղում գտնվող Օլիմպիական և Գալիլեո-սկայա փողոցների մէջտեղ գտնվող փոքրիկ փողոցը երկու ծայրերից տախտակակց և միացվեցաւ այդ փողոցի վրա գտնվող մի բնակարանի հետ, այնպէս որ միանգամայն ընդհատակց այդ երկու փողոցներէ իր յարաբերութիւնը լսւ աշտմս այդ փողոցներով մէկից դէպի միւսը անցնելու համար պէտք է բաւական տարածութեան վրա պտոյտ անել, որ մանաւանդ շատ դժուար է լինում ցելս ժամանակները: Արդե՞հ յայտնի է քաղաքային վարչութեան այդ իրողութիւնը:

Ահա մի քանի ժամանակ է, որ թիֆլիսի մի բողոքական աստիճանադար պտտելով թիֆլիսի յետնկած թաղերը, ժողովում է իր շուրջը կանանց և նրանց մէջ կրօնական պրօպագանդա է անում: Նա զխաւարապէս մտաք է գտնում վրացիների մէջ: զիտէ մի քանի լեզուներ և իր դործունէութիւնը սկսում է այն ժամանակ, երբ արդարաւրդի թողնում են բնակարանները և գնում գործի: Այդ մարդը դիմում է և հետեւալ միջոցին, կրօնափոխութիւնը քարոզելու ժամանակ, երբ հանդիպում է դիմադրողներին, անմիջապէս դանակով իրան խնկադար է ցոյց տալիս:

Մայիսի 3-ին, հանգուցեալ Բաֆֆիի բնակարանում, ներկայութեամբ ոստիկանութեան պաշտօնեայի, պարսից հիւպատոսարանի քարտուղարի, Բաֆֆիի թաղման գործը կարգադրելու համար կազմված յանձնաժողովի անդամների և տիկին Աննա Մէլիք-Յակոբեանի բաց արեցին կնիքները և ցուցակագրեցին հանգուցեալի դոյքը և թղթերը: Բացված թղթերի մէջ գտնվեցան մի քանի ձեռագիրներ, որոնցից մի քանիսը գեղ. լին տպագրված, բայց բաց արած թղթերի մէջ դեռ ևս չերևացին այն վէպերից մի քանիսը, որոնց մասին Բաֆֆի յայտարարել է դեռ իր կենդանութեան ժամանակ: Իսկ ինչ վերաբերում է փողին, յայտնվեցաւ որ հանգուցեալը ոչինչ դրամական կարողութիւն չէ թողել:

Թիֆլիսի քաղաքային դռման իր մայիսի 2-ի նիստում պատուեց Մոսկովյան վախճանված Յովհաննէս Անանեանի յիշատակը սոր կանգնելով և վճեց ցաւակցութիւն յայտնել հանգուցեալի ընտանիքին:

Վանից ստացած մեր տեղեկութիւններից երևում է, որ նորերս այնտեղի անգլիական հիւպատոսարանի թարգման Նշան Շիրվանեան մի քանի օր անհետանալուց յետոյ, նորից գտնվեցաւ Տեղական փաշայն, որի յարաբերութիւնները լաւ չեն այդ հիւպատոսարանի հետ, նորերս իր մօտ կանչելով վանեցի մի քանի հարուստ հայերին, առաջարկել է նրանց ստորագրել և ուրիշներին էլ ստորագրել տալ մի հանրագիր, որը արդէն ուղարկվեց Կ. Պոլիս: Այդ հանրագիր մէջ յայտնվում է, որ ժողովուրդը գոհ է կառավարութիւնից, պարսաւելով նրանց, որոնք կառավարութեան բարեկամ չեն համարվում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԲԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՅ

Անցեալ անգամ հաղորդեցինք, որ թիւրքաց Սուլթանը չէ ընդունում Յարութիւն պատրիարքի հրաժարականը: Այդ հարցի մասին «Արեւելք» լրագրի մէջ գտնում ենք հետեւալ մանրամասնութիւնները: Պատրիարքը Հայրը կայսրի պալատ երթալով, ընդունուեցաւ երկրորդ Սենեկայեան Հաճի Ալի պէյի կողմէ և յաւարտ Յէլալըքի արարողութեան պատիւ ունեցաւ Սուլթանին ներկայանալու: Պատրիարքը Հայրը թախանձազին խնդրեց Ն. Վեհափառութենէն որ չնորհ ընէ ընդունիլ իւր հրաժարականին ի Պատրիարքութենէն Կ. Պոլսոյ Ն. Սրբազնութեան կայսրի հրաժարման միակ պատճառն էր նրա անհաշիկ Պատրիարքը ընտրելը, մանաւանդ թէ Պոլսոյ կլիմայն իւր առողջական վիճակին բնաւ յարմարած չէ և նրա անհաշիկ պատրիարքական գործերը քաղաքամայր թիֆլիս ևս քան Պոլսոյ Պատրիարքութեան Գործերը:

Ն. Կ. Վեհափառութիւն պատասխանած է. «Գոհ եմ Ձեր պաշտօնավարութենէն և կը լսեմ թէ Հայոց Ազգն այդ գոհ է: Բացարձակապէս կը

մերժեմ Ձեր հրաժարականն և կը հրաւիրեմ զՁեզ օր շարունակէք Ձեր պաշտօնը»:

«Յարութիւն Պատրիարքը, կայսերական սոյն հրամանին վրայ, իւր հրաժարած մատուցանելով Ն. Կ. Վեհափառութեան, մեկնեցաւ ունկնդրութեան դահլիճէն և այն ինչ մերձակայ սրահը դընայած էր, ահա Վեհ. Սուլթանը պալատական պաշտօնէի մը միջոցաւ կրկին հրաման ղրկեց Ն. Սրբազնութեան թէ Բացարձակապէս կը մերժէ նորա հրաժարականը»:

Մուշի կողմերում բացի վերին աստիճանի աղքատութիւնը ժողովրդին նեղ դրութեան մէջ են գցել և աւաղակալին խմբերը, որոնց վերաբերութեամբ, ինչպէս հաղորդում են Կ. Պոլսի լրագիրները, Մուշից երկու աղերսագրեր են ուղղված մեծ-կազմերին և ներքին գործոց նախարարին, խնդրելով որ ուշադրութիւն դարձնի քուրդ աւաղակների չարագործութիւնների վրա: Այդ երկու աղերսագրերը յատուկ պատգամաւորութեամբ ուղարկվեցան ըստ պատկանելոյն:

«Արեւելք» մէջ կարդում ենք. «Կրօնական գործոց տեսուչ Վսեմ. Ձիլէյ պէյ հռոմէականաց Պատրիարքարանը կը տանի Հռոմէական ազգայնոց երկու կուսակցութեան միութեան վերաբերեալ կայսերական հրամանագրերն, որոնք ընթերցումը պիտի կատարուի հանդիսաւորապէս, հանդերձ բարեմաղթութեամբ առ Օդոտափառ Սուլթանը»:

ԲԱԼԿԱՆԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բալկանի վրա նորից յուզմունքներ են նկատվում, և եթէ այդ յուզմունքները չունեն առաջվայ բնաւորութիւնը, այսինքն եթէ դրանք արտաքին քաղաքականութեան ուղղակի ցոյցեր չեն, բայց դրա փոխարէն ունեն ներքին, աւելի վտանգաւոր դրութիւն: Բալկանեան համարեալ բոլոր փոքրիկ պետութիւնները մէջ այժմ տիրապետում է մի տեսակ շարժում, մի տեսակ իրարանցում, որը յարմար ժամանակ է ներկայացնում մի ահապին փոփոխութիւն առաջ բերելու ամբողջ թերակղզու քաղաքական կեանքի մէջ:

Բուլղարիայում դիւղացիների շարժումները շարունակվում են: Զատիկի տօներին կառավարութիւնը փակեց բոլոր պանդոկները, որպէս զի ուղիք խմբիները աւելի չը գրգռեն դիւղական դասակարգի շարժումները: Սակայն չը նայած այդ միջոցներին, չը նայած, որ կառավարութիւնը աշխատում է հաւատացնել, որ ոչինչ ծանր շարժում չը կայ, այնու ամենայն, այդ ներքին յուզմունքները ծանր կերպարանք են առնում, և ինչպէս հեռագրում են այնտեղից, ապրիլի վերջին թերթից սկսած գիւղացիների յուզմունքներն աւելի սաստիկ կերպով են սկսվել:

Կուսակցական-քաղաքական կուիւնները շարունակվում են Սերբիայում: Միլան թագաւորի հակառակ կուսակցութիւնը շարունակվում է ցոյցեր անել, և աւստրիական ու հակա-աւստրիական կուսակցութիւնների ընդհարումները աւելի սուր կերպարանք են առնում:

Բուլղարիայում ներքին գործերը խաղաղ չեն: Ֆերդինանդին հակառակ կուսակցութիւնը գործում է, և կառավարութիւնը ստիպված է միշտ արտակարգ միջոցների դիմել իր ազահովութիւնը պահպանելու համար. երկրի ներսում նկատվում են խառնակութիւններ, իսկ Ալեքսանդր Բատենբերգի ամուսնութեան խնդրը, որ նրան պէտք է կապի դերմանական կայսերական տան հետ, շարժել է այդ իշխանի խնկարկոյններին: որոնք այժմ մի փոքր սառել են Ֆերդինանդից, և այդպիսով մի քանի հանգամանքների միասնալ կարող է Բուլղարիայում նոր փոփոխութիւններ առաջ բերել:

Իսկ Մակեդոնիան դեռ մնում է իբրեւ կենտրոն քաղաքական ամեն տեսակ աղիտացիաների. այդտեղ գործում են ոչ թէ միայն բուլղարական ձեռքեր, այլ և յոյներ: Բաղաքական այդ խառն վիճակը ոտքի է կանգնեցրել այս կամ այն երկրի աքսորեալ-դադրակալներին, որոնք աւաղակային խմբեր կազմելով յարձակումներ են դրժում: զխաւարապէս քաղաքական նպատակներով: Իսկ Ալեքսանդր աւաղակային խմբերի շարժումների բուն է դարձել: Աւելացրէք դրա վրա և այն, որ Թիւրքիայի և Գրեկաստանի յարաբերութիւնները դեռ լարված դրութեան մէջ են, և հասկանալի կը լինի թէ ինչ տատանման մէջ է ամբողջ Բալկանը, որը այս րօպէս ամենապարտաւոր հող է ներկայացնում եւրօպական դիպլոմատիայի դիտումների համար:

Այդ բանը շատ լաւ են ղգում աւստրիական քաղաքական գործիչները. այդ տեսնում են և անգլիական կառավարութեան ղեկավարները և դարմանալի չէ, ուրեմն, որ Եւրօպայի մի քանի երկրներում այն համոզմունքի են, որ Բալկանի վրա այս գարնան մի մեծ փոփոխութիւն կարող է լինել...:

ՖՐԱՆՍԻԱՆ ԵՒ ԳԵՆԵՐԱԼ ԲՈՒԼԱՆԺԷ

Գենեւալ Բուլանժէ շարունակում է իր աղիտացիան. այժմ արդէն նա չէ էլ ծածկում, որ իր բոլոր ցոյցերը ուղղված են հանրապետութեան դէմ, թէն նա չէ քաշվում թող փչելու ամբոխի աչքերին: Իր ձեռքերի մէջ կրկնելով, թէ «Ֆրանսիային պէտք է ունենալ ռազմապետական սկզբունքների վրա հիմնված հանրապետութիւն»: Բուլանժէ, ինչպէս արդէն հեռագիրը լուր բերեց, ճանապարհորդում է Ֆրանսիայի մի քանի կողմերում, ճառեր է խօսում և աշխատում է յուզել ժողովրդի մի յայտնի մասը: Նպալէժօնի պատմութիւններով ուղեորված այդ գենեւալը, ինչպէս երևում է, դրամական ահաղին միջոցներ ունի, որի մի յայտնի մասը նա անկաւակած ստացած կը լինի միապետական կուսակցութեան «Թագաւոր իշխաններից»: Բուլանժէ ոգեւորվել է այն մի քանի աղիտութիւններից, որ գտաւ մի քանի տեղերում: Ֆրանսիացիների հայրենասիրական ղգացմունքները վաւերաւ համար, նոցա վրէժխնդրութեան զգացմունքները բողոքելու և թշնամական ինստինկտների գրգռելու համար: Բուլանժէ հրատարակում է մի դիւք, որը գերմանացիների արշաւանքի պատմութիւնը պէտք է լինի, և որը մի քանի միլիոն օրինակներ տպելով, պէտք է տարածվի ձրիաբար: Ֆրանսիայի ամեն անկիւններում:

Գորա հետ միասին Բուլանժէ արդէն հրապարակ դուրս բերեց միջնական կերպով իր քաղաքական մտքերը. նա պահանջում է լուծել, ոչնչացնել պատգամաւորների ժողովը. նա առաջարկում է ոչնչացնել հանրապետութեան նախագահի պաշտօնը. իսկ դրանից յետոյ նախկին մինիստրը խօսում է ներքին խառնակութիւնների, ապա-տամբութիւնների և զօրքը ոտի կանգնեցնելու մասին, բալկանի չունենալով պարզ կերպով յայտնելու իր անձնական դիտումները և ծածկելով այդ բոլորը ներքին խառնակութիւններին:

Նմիտալի, որ այդ յանդուգն ցոյցը, որը ուղղված է դէպի հանրապետութիւնը, երկար կը տևի, դժուար է: Միապետականների ձեռքին գործիք դարձած, և իր սկիւնական փառասիրութեան դերի գնացած գենեւալը արդէն արձամարհանքով է վերաբերվում դէպի ամբողջ ժողովրդի իրաւունքը, նա արդէն ժպիտ է արձակում դէպի հայրենիքի ներքին աղաւաղութեան սուրը գործը, նա իրան թող է տալիս կուռք դառնալու ամբոխի համար, — և այդ արդէն բաւական է, որ Ֆրանսիան վերջնականապէս պատժել այդ յանդուգնութիւնը, այդ քաղաքական քաղաքանդութիւնը, որը բացի այն, որ ոչինչ օգուտ չէ կարող տալ երկրին, նոյն իսկ ծիծաղելի կարող է դարձնել մի ժողովրդի համբերութիւնը, որը համարվում է ամբողջ Եւրօպայում ամենից ազատ, և ամենից հաւունացած: քաղաքական տեսակէտից:

Այժման Բուլանժէ արատ է բերում հանրապետութեան. այժման Բուլանժէ խայտառակում է հանրապետական Ֆրանսիայի անունը. և մինչև երբ պէտք է այդ արատը և այդ խայտառակութիւնը տան Ֆրանսիան...:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լուրեր հայոց մասնաժողովը, «Journal de Genève» լրագրի ասելով, ներկայացրեց Ֆրանսիական մինիստրութեանն էլ նոյնպիսի մի յիշատակագիր թիւրքաց հայերի դրութեան մասին, ինչպիսին ներկայացրած է արդէն նոյն մասնաժողովի կողմից լուրը Սուրբիլին: Այդ երկրորդ յիշատակագիրը ներկայացրած է ար. Գուլէի ահաւանդ:

—Լուրեր են տարածվել, որ կուս Անդրաշի նշանակվել է աւստրիական դեսպան Բերլինում: Բերլինից հեռագրում են, որ այդ լուրերը ձիւղ չեն:

—Բուլղարիայից գրում են, որ քաղաքական այժման անհաստատ դրութիւնը արգելք լինելով երկրագործութեան և արդիւնաբերութեան դար-

դանալուն, վերին աստիճանի աղքատութեան մէջ է դցել ժողովրդի մեծամասնութիւնը:

—Կրիտէ կղզու վրա նորից յուզմունքների նըշաններ են երևում Կ. Պոլսից հեռագրում են, որ Կրիտում տեղական իշխանութեան դէմ ապստամբութեան պատրաստութիւններ են տեսնվում:

—Սօֆիայում նոր ձերբակալութիւններ են կատարվել. կառավարութիւնը խտրութեամբ է վերաբերվում դէպի հակառակ կուսակցութեան պատկանողները:

—Ջինաստանի Շանխայ քաղաքից հեռագրում են, որ նորերս պատահած ջրհեղեղին զոհ գնացին 3,000 հոգի:

—Փարիզի «Journal des Debats» լրագիրը պնդում է, որ պէտք է լուծել «Հայրենասէրների միութիւնը»:

—Խօսելով Մակեդոնիայում և Կրիտէ կղզու վրա նկատվող յուզմունքների մասին «Nord» լրագիրը այն միտքն է յայտնում, որ այդ բոլորի մէջ մեղաւոր է մինչև այժմ էլ Բուլղարիայում շարունակվող անիշխանական դրութիւնը:

—Գենեւալ Բուլանժէի գրելը, որ կրում է «Գերմանացիների արշաւանք» վերնագիրը, ինչպէս գրում են Փարիզից, մի քանի մասից պէտք է բաղկացած լինի: Փարիզում արդէն դիտեն, թէ ընդհանրապէս ինչ բովանդակութիւն պէտք է ունենայ այդ գիրքը, որի միլիոնաւոր օրինակները հեղինակը ձրի կերպով պէտք է տարածի: Փարիզի մի քանի լրագիրներ այն միտքն են յայտնում, որ այդ գիրքը մի առանձին տպագրութիւն չի անի, աչքի առջև ունենալով, որ Բուլանժէի գրիչը շատ թույլ, անզօր և անբովանդակ մի բան միայն կարող է արտադրել:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են Շվեյցարիայից հետեւալը: «Ապրիլի 23-ին բացվեցաւ Վէյվ-Մօնտրէ-Շիլօնի է-լէկտրական երկաթուղին, ժընէվի ծովափի երկայնութեամբ: Հիւսիսից տպագրութիւն է գործում մարդու վրա այդ երկաթուղին. նա գնում է շատ արագ կերպով, առանց ձիերի և շոգու, միմիայն էլէկտրական ոյժով առաջ մղվելով: Տեղերի գնե-րը շատ էժան են և ճանապարհը սկսվում է Վէյվէ քաղաքից, անցնում է Մօնտրէ տեղով և գնում է մինչև աշխարհահռչակ Շիլօն ամրոցը, որը ուղիղ ծովափի ափումն է գտնվում և որը երկրի իր յայտնի և գեղեցիկ ոտանաւորներից մէկում անգլիացի երևելի Բայրոն բանաստեղծը: Ամբողջ ճանապարհի տարածութիւնը 7 վերստից աւելի է»:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի Մեծ-Իշխանօհի Մարիա Պաւլօւնա երեկոյեան վերադարձաւ արտասանմանից:—«Сибирскій Вѣстник»-ի հրատարակութիւնը դադարեցրած է 4 ամսով: Թուստտանի մկրտութեան ինհարկրամակի օրվայ համար Պետերբուրգի Սլավոնական բարեգործական ընկերութիւնը արդէն տպագրել է երկու պատկերազարդ բրօշուրներ՝ «Ս. Վադիմիր կեանքը» և «Թուստտանի մկրտութիւնը»:—«С. Петерб. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ ի նկատի ունենալով այն դանգաւանները, որ տուել են գիւղական հողերը վերջնականապէս սահմանադրելու ժամանակ առաջ եկած տարաձայնութիւնների առիթով, ենթադրված է ամենակարճ միջոցով պարզաբանել այն ընդհանուր և պրինցիպային հարցերը, որոնք վերաբերում են այդ տարաձայնութիւններին: Նոյն լրագրի խօսքերին նայելով, պետական խորհրդի կողմից հաստատ կանօնները, որոնք վերաբերում են աւստրական նաւահանդիսների կառավարութեան, ենթադրութիւն կայ գործադրութեան մէջ մոցնելու ամենուրեք այս տարվայ երկրորդ կիսից: Լյուքս բարձրագոյն ատեան, որին կարելի է դանգաւաներ ներկայացնել նաւահանգիստների կառավարիչներին արարմունքների դէմ, Պետերբուրգում հիմնվում է նաւահանգստային դիւաւոր վարչութիւն: Նոյն լրագիրը լսել է, որ ազնւականների շատ ժողովներ խնդրել են հնչաւանքի մանր գիւղատնտեսական գործաւանների համար արագ քաշելու պայմանները, և որ ֆինանսների մինիստրը ցանկալի է համարել բաւականութիւն տալ այդ խնդրերին, սակայն ոչ աւելի շուտ, քան թէ նոր կանօնների հաստատու-լուց մի տարի անցնելուց յետոյ: Այդ հիմունքների

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. ваз.

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ՎԱՍ ԵՐՎՈՒ ՍԵՆՏԱԿ
կահակորված, բոլոր յարմարութիւններով, ծառայով և ծառիով:
ИЩУТЪ ОДНУ ВОЛЬШУЮ ИЛИ ДВѢ КОМНАТЫ
меблированныхъ, со всѣми удобствами, прислугою и со столомъ. Адресъ ос-
тавить въ агентствѣ Бегутова и К^о.
5—5